

ՊԵՏՄԵՓԻՏՈՒԿՈՆ

2.

ԴԱԲԱԻՈՆԱՅԻՔ = ԳԱԲԱԻՈՒՆՅԻՔ

Յովհաննէս պատմագրի Գաբաւոնացիքը կապ չունին Ս. Գրքի Գաբաւոնացւոց հետ, այլ Փայտակարան նահանգում ապրող մի ժողովուրդ է, որ յիշում է Պըտղոմէոսը $\Sigma\alpha\beta\alpha\iota\sigma\iota = \Gamma\alpha\beta\alpha\iota\sigma\iota$: Գաբաւոնացիք Թուրքեստանից են գաղթել Հայաստան:

Աշխարհագրական վայրերի այս ուսումնասիրութեան հետ կուղէի բանասէրների ուշադրութիւնը հրաւիրել Գաբաւոնացիք ժողովրդի անուան վրայ, որ Յովհաննէս պատմաբանն է յիշում:

Առաջին անգամ այս անունը լսողն իսկոյն պէտք է յիշի Ս. Գրքի Երուսաղէմից հիւսիս գտնուած Գաբաւոն¹ քաղաքի քանանացի ժողովուրդը: Այս Գաբաւոնացիք խաբէութեամբ դաշինք կռեցին Յեսուի և Իսրայէլի իշխանների հետ դառնալով «փայտակոտոր», «փայտաբեր» և «ջրաբեր» — «ջրակիր» Իսրայէլի «ամենայն ժողովրդեանն և սեղանոյն Աստուծոյ»²: Սակայն Յովհաննէս պատմագրի խօսքերից երևում է, որ նորա յիշած Գաբաւոնացիք ոչ մի առնչութիւն չունեն Ս. Գրքի Գաբաւոնացւոց հետ, այլ այն մի ժողովուրդ էր, որ ապրում էր Ատրպատականում, որից Սիւնեաց իշխանը Ժ. դարում մի գունդ զինուոր ունէր և որ այդ ժողովրդից գաղթականներ կային Վասպուրականում և հաւանօրէն և Սիւնիքում:

Ահա այդ վկայութիւնը: Յ. պատմագիրը Բիւրական

1. Յեսու ժԸ, 25. ԻԱ, 17: Ա. Մնացորդաց ժԶ, 39. ԻԱ, 29: Բ. Մնացորդաց Ա, 3, 4: Բ. Թագաւորութեանց Բ, 12, 13, 24. Ի, 8: Գ. Թագաւ. Գ, 4: Երեմիա ԽԱ, 12:

2. Յեսու Թ, 21, 27. Հմմտ. և Ժ:

ամբողջի առումից յետոյ ասում է, «Աստ ապա հրաման հասեալ առ նրսր ի Յուսփայ ոստիկանէն մեծէ՝ չուեալ գնաց յԱտրպատական աշխարհ, և զապստամբեալ Գաբաւունացիսն կողմանցն այնոցիկ կամ ի հնազանդութիւն նոցա համոզել, և կամ մարտիւ պատերազմի սրակոխ առնել» (ՅՊԵՐ, ԿԷ, էջ 442. ՅՊՄ, էջ 191): «Սիսական տոհմի» մեծ իշխան Սմբատը իւր երեք եղբայրներով պահանջում է Գողթան գաւառի հազարացի բռնակալից «Դարձուցանել զսեպհական իւրեանց ամբոցն Երնջակ. և զառ ստորոտով նորա զգաւառն՝ զոր Յուսփայ ոստիկանին առեալ տուեալ էր ի ձեռս Գողթան բռնակալին»: Այս պատճառաւ կռիւ է ծագում. «Զօր Գաբաւունացի՝ իշխանին Սմբատայ, որ ի թիկանց կուսէ կային Վասակայ եղբօր նորուն ի ձախ կողմն թեւոյն, յանկարծօրէն . . . դիաթաւալ յերկիր զքաջն և զկորովին Վասակ արկանէին» (ՅՊԵՐ, Կ, էջ 385. ՅՊՄ, էջ 167): «Մեծ իշխանն Արծրունեաց Աշոտ, որ ի բողբոջից բուսոյ Սենեքերիմայ արքայի, ելեալ զգնայր շրջէր զկողմամբ իւրոյ տէրութեանն փոքր ինչ գնդով. և հասեալ ի ձորակ մի զոր Փորակ կամայ՝ անուանեն, երեկօթս անդ

1. Բնագրում «Շամբայ». սակայն ծանօթութեան մէջ ասում է «Ոմանք՝ փորակ կամայ, այլ՝ փորակկամայ» = Փորակ կամայ: Վերջին ձևն է ուղղագոյնը, ինչպէս ունի Մոսկուայի հրատարակութիւնն ևս, այլ և Թ. Արծրունին. «Սկսաւ . . . յինքն գրաւել . . . զամուրն Սեան ի փորն կամայ» (Գ, իբ, էջ 232. Ս. Պետերբուրգ 1887). «ի գեօղն Պղուանս, ի գաւառին կամայ կոչեցեալ Փորակ» (Անդ, Գ, բ, էջ 275). կարծում ենք ևս «Ծովակն Յրմբայ» (Անդ, Գ, իթ, էջ 260) = Ծովակն կամայ: Այս անունը իսկապէս պէտք է լինէր կամայ կամ կմայ, յունարէն բառիցս Δίψα = կայուն ջուր. հեղեղուած գետաջուր, մօր, ձախճախուտ, լիճ, ջրաւաղան, հեղեղներից հովիտը ծածկող ծով, այլ և ծովածոց ծովախորշ» (G. E. Benseler, Griechisch-Deutsches Handwörterbuch): Այսպէս կոչուել է սկզբում ըստ ամենայն հաւանականութեան Վանայ ծովի հիւսիսային արևելեան կողմցածի մասը, ապա և կղզին: Այս ենթադրութիւնը հաւանական է դառնում և այն պատճառով, որ Վանայ ծովի միակ ձուկ տառելիը, որ գլխաւորապէս այդ մասում թափուող Բենտիմահի գետակի խառնարանից է դուրս գալիս, նոյնպէս յունարէն Τάριχος = աղածուկ բառից է առնուած երևում: Տառելի

առնէր յազարակի միջ, յորում քնակէին Գաղաւնացիք ընդ յարկաւ շինուածի տանցն մաեալ զեռեղեալ սակս ձմերային ժամանակին» (ՅՊԵՐ, լր, էջ 239. ՅՊՄ, էջ 105):

Եւ որովհետեւ Երուսաղէմի առաջին տպագրութիւնն ևս ինչպէս և Մայր Աթոռի բոլոր ձեռագրերն ունին Գաղաւնացիք ձեր, ուստի հաւանական է, եթէ ոչ ինքը հեղինակը, գոնեա յետագայ զրչագիրները շփոթել են այդ անունը իրենց քաջ ծանօթ Ս. Գրքի համանուն ժողովրդի հետ, թերևս և փոխաբերութիւն կարծելով, որ սակայն, ինչպէս շուտով կը տեսնենք, անհիմն է:

Այս անունը դժուար թէ որ և է կապ ունենայ Քաղաւն-Խաբոր՝ գետի հետ. բայց ի նկատի առնելով Յ.

բառի ծագման ժամանակը մեզ յայտնի չէ, բայց յայտնի է, որ Բղնունեաց ծովի ափին «Առեստ աւանի» մօտ էր «ձկնասեանք» կամ «ձկնասեանքն արքունի ի վերայ գետակին» (Բուղանդ Գ. Ը, 19. Դ, ԻԲ, էջ 142. Վենետիկ 1889): Գետակն է անշուշտ այժմեան Բենտեմահին = ձկան բանտ, խառնարան, կապելու տեղ. և ուրեմն այս խառնարանի մօտ էր Առեստ աւանը: Այսպէս է երևում և Սերէոսից (Պատմ. ի Հերակլն Բ, էջ 33. Գ, 45 Ս. Պետերբ. 1879), որից և գուցէ անցել է Խորենացու աշխարհագրութեան «Յելից ծովուն Բղնունեաց... Առեստովան, ուստի ելանէ ձուկն» (ԽԱՍ. էջ 32): Ղևոնդ, Յովհաննէս և Ասողիկ պատմագրների խօսքերից հետևում է, որ կար և մի փոքր Առեստաւան (Հմմտ. Ղ. Ինճիճեան, Ստորագր. էջ 196): «Փորակ, գաւառ, ծովակ Լմբայ անշուշտ ծագել է Լիմ կամ Լիմն անունից. որ ԺԴ. դարուց շատ առաջ հակառակ Ինճիճեանի ենթադրութեան (Ստորագր. Հին Հայաստ. էջ 228, Վենետիկ 1822) յիշուած է Մ. Խորենացու աշխարհագրութիւնը (Ա. Սուքրի, Աշխարհացոյց Մ. Խորենացույ, էջ 32. Վենետիկ 1881): Այս գաւառը և կամ փորակը անշուշտ սկսւում էր Վանայ ծովի կտուցածի մասից, այն է Լմբայ ծովակից — որի հարաւարկեւեան ափի Պանս անունով վայրը՝ (V. Cuinet, Turquie d'Asie II, Paris 1892) Վանայ վիլայէթի քարտէզում թերևս հին Պղուանսը լինի — և տարածւում էր մինչև Արճակ լիճը, որից հարաւարկելք գտնուած էրմանից լճակի և գեղի իւսիսարկելք, վտակի մը խառնուրդին մօտ» ընկնում է այժմ Սևան գիւղը — ինչպէս Վանից հաղորդում է ինճ Տ. Զիթունին — որ անշուշտ Թ. Արծրունու վերոյիշեալ «Սևան ամրոցն» է:

1. Ա. Սուքրի, Աշխարհացոյց Մ. Խորենացույ, էջ 37. Քրանսերէն էջ 49:

պատմագրի խօսքը, որ այս ժողովուրդն ապրում էր Ատր-պատականում և Սիւնեաց աշխարհին մօտ լինելով այստեղ ունէր գաղթականներ, որոնցից Սիւնեաց իշխանը գունտ էր կաղմել, պէտք է կարծել ուրեմն, որ Խորենացու աշխարհագրութեան մէջ կաղիշների երկրում յիշուած «Գաբառու-բագինք»¹ անուան հետ է կապուած, որի մասին Ա. Սուքրին գրում է Մ. Խորենացու Աշխարհացոյցի Ֆրանսերէն թարգմանութեան ծանօթութեան մէջ. «Les Gabaroubaghin (Գաբարուբագինք?) dont le pays s'étend jusqu'au fleuve de Cambyse, sont les peuples de Gabarou près de Païdagaran, province de l'Arménie»²:

Մարքուարտը Սուքրու այս ծանօթութիւնը «անհասկանալի» համարելով իւր կողմից գիտում է. «Գաբառուբագինք» bei Ptol. 6, 2 էջ 390, 5 Σαβᾶροι Βορροι unter 82° 30' L, 42° 30' Br. Գաբառու Steht wohl für Գաբաւու Gabavu, und dies setzt griechisch Γαβᾶροι statt Σαβᾶροι voraus, wie Rubiu==Πίβιοι N. 34. Die Mündung des Kambyses wird unter 81° L. 42° 45' Br., die Quellen unter 80° L. 41° Br, gesetzt»³:

Յայտնի է, որ Պտղոմէոսի աստիճանները միշտ ճիշտ չեն նշանակուած⁴, բայց եթէ ընդունենք անգամ, որ Պտղոմէոսը չէ սխալւում և այս ժողովուրդը մի ժամանակ Kambyses-կամբէճան-Եօրայի մօտերքն է ապրել, իսկ Սուքրին հաւանօրէն Գաբառու-բագինքը և Փայտակարանի «Եօթնփորակեան բագինքը», որ յիշում են Խորենացու աշխարհագրութեան համառօտ օրինակները⁵, միևնոյնն է

1. «Գաբառու-բագինքը» թերևս Բագու քաղաքի մօտիկ Սուրախանի գիւղում այժմ էլ կայուն կրակապաշտական մեհեանն է: Բագու անունն էլ երևի ծագել է Բագին բառից:

2. Ա. Սուքրի. Աշխարհացոյց, հայերէն, էջ 12. Ֆրանս. թարգ. էջ 13. ծան. 4:

3. Eransahr, էջ 159, ծանօթ. 43. տես էջ 140:

4. Ղ. Վ. Ինճիճեան, Ստորագր. Հին Հայաստան, էջ 77. Վեներտիկ 1822:

5. Ա. Սուքրի. Աշխարհացոյց Մ. Խորենացու, էջ 33 [ԺԱ]:

Համարել. սակայն և այնպէս պէտք է շեշտենք, որ ոչ ապա-
քէն Գաբառու-բաղինքն հենց ըստ Մ. Խորենացու Աշ-
խարհացոյցի գտնուում էր Կատիշների երկրում, որոնց
գունդը յիշում են Ղ. Փարպեցին և Եղիշէն. իսկ Կատիշ-
ներն ապրում էին Ատրպատականում և այն էլ Փայտա-
կարանի սահմաններում¹: Գալով բուն անուան եթէ Γαβαροι
չէր արդէն Γαβαρον, ապա պէտք է ասել, որ Յովհաննէս
պատմագրի Գաբառնացիքը դիւրութեամբ կարող էր Աս-
տուածաշնչին ծանօթ գրչագիրների ձեռքում փոխուել
Գաբառնացիք. մանաւանդ որ հնագորութեամբ² ևս կա-
րող է այս շփոթութիւնը բացատրուել:

Այս ժողովրդի մասին դժբախտաբար բացի Պտղոմէո-
սից և Յ. պատմագրից ուրիշ ոչ մի տեղ յիշատակութիւն
չենք գտնում: Հետաքրքրական է միայն դիտել, որ Ստե-
փան Օրբէլեանը «Յովհաննէս Պատմագր»-ից³ քաղելով
Սիւնեաց պատմութեան վերոյիշեալ ժամանակի անցքերը
Յովհաննէսի Գաբառնացիքը անուանում է թուրք: Ս. Օր-
բէլեանը պատմելով թէ Սմբատ իշխանը իւր երեք եղբայր-
ների հետ «Գողթան ամիրայից» պահանջում էին «զամուրն
երնջակայ և շրջակայ զաւառսն» և վերջինիս մերժումը

1. H. Kiepert, *Atals Antiquus*, 2 ed. Berlin.

2. Եղիշէի «Փիւքուն»ը (Դ, էջ 146, Թէոդոսիա 1861) =
«Փիւքուն» (Մատենագրութիւնք, Դ, էջ 73, Վենետիկ 1859) որ է
անշուշտ» Փիւքունակ (ԽԱՎ, էջ 605. ԽԱՊ, էջ 16) և «Փւքանակ
(ԽԱՍ, էջ 27). «Ն և կ շփոթութիւնը... մանաւանդ ստորին երկա-
թագրում և խոշոր բոլորագրում» տես և Գ. Տէր Մկրտչեան, Ա-
զաթանգեղոսի Աղբիւրներից, Յիշատակ Դատակնքաց Գորիա և
Շմոնի, էջ 21—22. Վաղարշապատ 1896): Այս ժողովուրդն է հա-
ւանօրէն Ռուսաց պատմութեան մէջ յայտնի «Պեչենեգ»ները.
ուստի և փիքոնակ ձևն է ուղղագոյնը, որ թերևս պիտի լինէր
փեքոնակ. Թէոդոսիայի հրատարակութեան ցանկում նշանակուած
է փեքունա: Եթէ այդպէս է, պէտք է որ Պեչենեգները շատ աւելի
վաղ ապրում լինէին Վոլգայի և Եայիկ-Ուրալի միջև և ոչ թէ Թ.
դարում, ինչպէս ենթադրւում է (П. В. Голубовскій, Печенѣги,
Торки и Половцы, Кіевъ 1884. Հմմտ. Բրոկհաուզի և Եֆրոնի
հանրագիտարանը): 3. Պատմ. նահանգին Սիսական, Իէ, էջ
106. ԼԲ, 502. Թիֆլիս 1911:

ասում է. «Լուեալ ապա զայն Սմբատ և զոր գումարեալ... ընդ իւր բերեալ և զսկիւթացի թուրքն, որք խորանօք բնակեալ էին յաշխարհի նորա»¹: Ապա պատմում է վասակի սպանումը ևն: Օրբէլեանն սկիւթացի ասելով հասկանում է այժմեան թուրքեստանի բնակիչներ, մանաւանդ որ մի այլ տեղում յիշում է «սկիւթացի թուրքաստանեայք»²: Ապա սոյն «Ստեփանոսի... ձեռքով» «արևելեան աշխարհից» գրած թղթում Հայոց Գրիգոր կաթողիկոսից բացատրութիւն է պահանջում «վասն պարսելոյ և կոշկոճելոյ զբերանս զրաբան և ունայնախոյզ պարսաւադիր արանց որք իբրև զՍկիւթիանոս, զօրէն Գաբաւոնացեացն շրջէին՝ սպրդեալք տանէ ի տուն, և շշուկս... յօղելով. հոռում է մեր կաթողիկոսն»³: Ըստ երևոյթին Օրբէլեանը Սկիւթիանոս անունով հասկացել է «Սկիւթիամոսք» կոչուած աղանդաւորները⁴, որ սկիւթացիք⁵ է նշանակում. սակայն մեր վերոյիշեալ երկու վկայութիւններից պէտք է հետևեցնել, որ այստեղ Օրբէլեանը պարզապէս ուղիղ է ասել սկիւթացի, մանաւանդ որ պահել է և Յովհաննէս կաթողիկոսի Գաբաւոնացիք կոչումը, որոնց իւր վերոյիշեալ առաջին վկայութեան մէջ «սկիւթացի թուրք» անուանեց:

Սկիւթացի անունը մեր պատմագրութեան մէջ շատ ընդարձակ առումն ունի. ուստի թէ Գաբաւոնացիք իրօք թուրք են եղել, մենք չենք կարող պնդել, բայց որ նոքա թուրքեստանից-թուրանից են գաղթել, անհաւանական չէ, քանի որ այդ տեղից են գաղթել մեր երկիրը կասպերը, այլ և Ռասիաններն ու թուխարները ունեցել են հնագոյն շրջաններում իրենց հատուածները Հայաստանում⁶, ինչպէս որ յետոյ ևս ԺԱ. դարուց սկսեալ թուրք-թաթարական ցեղեր հետզհետէ հեղեղեցին մեր երկիրը, որոնց սերունդները ցարդ ապրում են Հայաստանում:

Ս. Կանայեանց

1. Անդ, ԼԸ, էջ 195: 2. Անդ, ԿԶ, էջ 373: 3. Անդ, ԿԹ, 452:

4. Գ. Տէր Մկրտչեան, Գիրք Հերձուածոց, Արարատ Ամս. 1892, էջ 93, 94: 5. Առ Գողոսացիս, Գ. 11:

6. Ստ. Կանայեանց, Սրբազրութիւններ և ենթադրութիւններ (Արարատ Ամսագիր 1910, էջ 172—177) և «Մամիկոնեանց կալուածները» Անդ. 1907, էջ (373—391) 387—391. Վաղարշապատ):